«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ 61.1-րդ հոդվածով.

«**61.1 Հոգեբանը, նրա իրավունքներն ու պարտականությունները**

1. Հոգեբանը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, որին վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեկան, հուզական և ճանաչողական վիճակը գնահատելու, երեխայի լավագույն շահը, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի իրավաչափ շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով քննչական և այլ դատավարական գործողություններին մասնակցելու համար։

2. Քրեական վարույթով ներգրավված հոգեբանն իրավունք ունի՝

- անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հարցաքննության կամ առերեսման ժամանակ հարցեր տալ անձին՝ վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանի թույլտվությամբ.
- վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել մասնագիտական առաջարկներ՝ վարութային գործողության կատարման պայմանների, ընթացքի, ձևաչափի կամ մասնակիցների վերաբերյալ.
- անչափահասի հետ կապված քննչական գործողությունն սկսելուց առաջ առաջարկել քննիչի կողմից տրվելիք հարցերի ձևակերպումներ.
- առաջարկել մեղադրյալի, պաշտպանի կամ այլ անձանց կողմից անչափահասին ուղղված հարցերը նախապես համաձայնեցնել իր հետ՝ առանց անչափահասի հետ անմիջական հաղորդակցության.
- ծանոթանալ անչափահասի մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես

նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը, գրառումների վերաբերյալ կատարել դիտողություններ, իր մատնանշած հանգամանքների մասին գրառումներ.
- յուրաքանչյուր անգամ ստանալու ապացուցողական կամ վարութային այլ գործողությանը մասնակցելու համար կատարած ծախսերի հատուցում.
- իրականացնելու սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Քրեական վարույթով ներգրավված հոգեբանը պարտավոր է՝

- վարույթին օժանդակելու նպատակով ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.
- վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իր որակավորումը հաստատող փաստաթղթերը.
- դատարանի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և վարույթին ներգրավված անձանց հետ հարաբերությունների մասին.
- անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել ապացուցողական կամ վարութային այլ գործողության կատարման վայրում, դատական նիստի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.
- մասնակցել անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի մասնակցությամբ կատարվող վարութային գործողություններին.
- գործել անաչառ և մասնագիտական էթիկայի պահանջներին համապատասխան.
- ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության արձանագրությունում գրառումների լրիվությունը և ճշտությունը.
- ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին,
- առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության, ինչպես նաև դռնփակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.
- ենթարկվել դատական նիստի կարգին:

4. Հոգեբանի կողմից ներկայացված հարցերը կամ առաջարկությունները վարույթն իրականացնող մարմինը կարող է համապատասխան պատճառաբանությամբ չընդունել, սակայն պարտավոր է դրանք ներառել արձանագրության մեջ:»:

Հոդված 2. Օրենսգրքի 212-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մասով.

«7. Վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտության դեպքում ապահովում է անչափահասի, անգործունակի կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի հոգեբանի հետ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) հանդիպում:»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 220.1-րդ հոդվածով.

«**Հոդված 220.1. Բազմամասնագիտական կենտրոնում քննչական և դատավարական գործողությունների կատարման կարգն ու ընդհանուր պայմանները**

1. Անչափահասների մասնակցությամբ քննչական և դատավարական գործողություններն իրականացվում են բազմամասնագիտական կենտրոնում հետևյալ դեպքերում՝

1) սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանքի վերաբերյալ վարույթով.

2) ընտանեկան և կենցաղային բռնության հանցանքի վերաբերյալ վարույթով.

3) երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ վարույթներով՝

եթե երեխայի լավագույն շահից չի բխում այլ վայրում հարցաքննության կազմակերպումը:

2. Բազմամասնագիտական կենտրոնին ներկայացվող պահանջներն ու դրա գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը:
3. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված վարույթներով, քննչական կամ դատավարական գործողությունների իրականացումը չի կատարվում բազմամասնագիտական կենտրոնում, եթե քննիչը հիմնավորում է բազմամասնագիտական կենտրոնում այդ գործողությունների կատարման անհնարինությունը կամ ոչ նպատակահարմար լինելը:
4. Անչափահասի օրինական ներկայացուցչի, փաստաբանի, պաշտպանի կամ հոգեբանի միջնորդությամբ կամ քննիչի նախաձեռնությամբ բազմամասնագիտական կենտրոնում կարող են իրականացվել նաև սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված վարույթներով անչափահաս տուժողի, վկայի կամ մեղադրյալի մասնակցությամբ քննչական կամ դատավարական գործողությունները:
5. Մինչև բազմամասնագիտական կենտրոնում հարցաքննությունն իրականացնելը քննիչը և հոգեբանը քննարկում են միմյանց հետ դեպքի և անչափահասի առանձնահատկությունները՝ այդ քննարկմանը ներգրավելով բազմամասնագիտական կենտրոնի սոցիալական աշխատողին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև բժշկին, փորձագետին կամ անչափահասի օրինական ներկայացուցչին:

4. Բազմամասնագիտական կենտրոնում հոգեբանի միջնորդությամբ կամ քննիչի նախաձեռնությամբ կարող է իրականացվել նաև անչափահասի դատաբժշկական, դատահոգեբանական կամ դատահոգեբուժական փորձաքննությունները:»:

Հոդված 4. Օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասում.

- 2-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.»կետադրական

նշանով.

- լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.

«3) անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությունը բազմամասնագիտական կենտրոնում իրականացնելու որոշում է կայացվել։»։

Հոդված 5. Օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին մասը «պարագայում» բառից հետո լրացնել «կամ սույն օրենսգրքի 220.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում» բառերով։

Հոդված 6. Օրենսգրքի 309-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մասով.

«6. Սույն օրենսգրքի 220.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում անչափահաս մեղադրյալի, տուժողի կամ վկայի ցուցմունքի դեպոնացումը կարող է իրականացվել բազմամասնագիտական կենտրոնում՝ անչափահասի օրինական ներկայացուցչի, փաստաբանի, պաշտպանի կամ հոգեբանի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ։»։

Հոդված 7. Օրենսգրքի 329-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-րդ մասով.

«2.1. Անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությունը կարող է իրականացվել սույն օրենսգրքի 220.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում բազմամասնագիտական կենտրոնում՝ անչափահասի օրինական ներկայացուցչի, պաշտպանի, հոգեբանի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ։»։

Հոդված 8. Օրենսգրքի 483-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 27-րդ մասով.

«Սույն օրենսգրքում նախատեսված՝ բազմամասնագիտական կենտրոնում իրականացվող քննչական և դատավարական գործողություններն իրականացվում են սույն օրենքից բխող Կառավարության որոշմամբ սահմանվող համապատասխան բազմամասնագիտական կենտրոնների ստեղծումից հետո։»։

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենսգրքի 483-րդ հոդվածի 27-րդ մասով նախատեսված դեպքերի։